

19 Մարտ 1978

Գերաշնորհ Տէր

Արիս Ս. Եպս. Շիրվանեան

նախագահ

Ս.Ներսիսեան Եկեղեցւոյ ծխական ժողովի

եւ

ծխական Խորհուրդի

Սրբազան Հայր,

Մենք ստորագրեալ Ս.Ներսիսեան Եկեղեցւոյ տրատու անդամներս նկատի ունենալով՝

Ա- Ս.Ներսիսեան Եկեղեցւոյ 55 տրատու անդամներու ստորագրութեամբ, 17 Փետրուար 1978 թուակիր Ձերդ Սրբազնութեան յանձնուած դիմումագրով յիշուած ժամանակամիջոցին մէջ, ծխական Խորհուրդը մեր կանոնադրութեան 15րդ յօդուածին համաձայն անդամական ժողով մը գումարելէ խուսափած ըլլալով.

Բ- ծխական Խորհուրդի նոր անդամներուն վաւերացումէն վերջ ալ, վերոյիշեալ դիմումագիրը գործադրութեան դրուած չըլլալուն պատճառաւ, ծխական Խորհուրդի 3 պատուաւինդիբ անդամները՝ երկուքը հին, իսկ երրորդը վերջին ընտրութեան առաւելագոյն քուէներուն արժանացած, ծխական Խորհուրդէն հրաժարած ըլլալով.

այսօր Թորոնթոյի St. George Եկեղեցւոյն մէջ կազմակերպուած ժողովին այդ եզրակացութեան հասանք թէ՛ ներկայ ծխական Խորհուրդի մնացեալ 6 անդամները կանոնադրութեան զանազան յօդուածներուն - 15, 21, 23 - հակառակ գործած ըլլալով մեր վստահութիւնը կորսնցուցած են:

Ուստի Ձերդ Սրբազնութենէն կը խնդրենք կանոնադրութեան գործադրութեան հսկել - Յօդ. 42 Դ - եւ առիթ տալ տրատու անդամներու վստահութիւնը վայելող նոր 9 հոգինոց ծխական Խորհուրդի մը ընտրութեան:

Այս առթիւ անգամ մը եւս կը հաստատենք մեր համաձայնութիւնը
610 Թորոնթոյայ ազգայիններու կողմէ ստորագրուած եւ վեհափառ
Հայրապետին ուղղուած ինդրագրին բովանդակութեան հետ, որ այսօրուայ
ժողովին մէջ ներկաներուն պահանջքին վրայ անգամ մը եւս կարդացուե-
ցաւ:

Մատչիմք ի համբոյր
Ձերդ Սրբազնութեան Աջոյն

ի Ռիմայ 150 ջրայր-- աքաւորու-

(Handwritten signature)
(Handwritten signature)

(Handwritten signature)
Ֆո. Բոզ/Բոբեւ
ՏԻՊ Թէթոն

(Կրտսէ Թեմիսթ. Քոստ 2/26)